

Համաձայնագիր-1

**25.12.2020թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/050 ծածկագրով գնման պայմանագրում
փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան

« 12 » Փետրվար 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Կիբերսեկ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Գասպարյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 25.12.2020թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/050 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման նպատակով 2021 թվականի համար նախատեսված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

2. Ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններից՝ 2021 թվականի հունվարի 1-ից:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. 25.12.2020թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/050 ծածկագրով գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

ԿԱՏԱՐՈՂ

«Կիբերսեկ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 17
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570021262310100
ՀՎՀՀ՝ 00134545
Տնօրեն

Է. Գևորգյան

/ստորագրություն/



Կ. Գասպարյան

/ստորագրություն/



